

ԵՐԵՎԱՆԻ ՄԵԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ



Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարեկանը 6 ռուբ. Առանձին համարները 5 կոպէտով. Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ. Մեր հասցէն. Тифлисъ, Редакция «Мшакъ». համ Tiflis, Redaction «Mschak». Տ է Լ է Փ օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և առ օրերից). Յայտարարութիւն ընդունվում է ամէն լիզուով. Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ. Տ է Լ է Փ օ Ն № 253.

Հ Ի Մ Ե Ա Գ Ի Ր Գ Ի Կ Ո Ր Ա Ր Ծ Ր Ո Ւ Ն Ի

ՌԵՎՈՒՄԻՆԱԿՈՒԹԻՒՆ  
Համակրելի ջանքեր.—Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Տպագրութիւններ. Նամակ Երևանից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ՀԵՒԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԱՆՆԱՍԻՐԱԿԱՆ. Հայերը և գերմանացիները.

ՀԱՐԱԿՐԵԼԻ ԶԱՆՔԻՐ

Ուրախութեամբ արձանագրում ենք, որ մեր Անդրկովկասի խուլ անկիւններից մէկում, Իզդրում, ծրագրվում է ներկայումս մի համակրելի ձեռնարկութիւն: Տեղական երիտասարդները որոշել են կազմել մի ընկերակցութիւն, որի նպատակը պէտք է լինի բարեփոխել տեղական տրնտեսութիւնը, մտցնել մի շարք կատարելաբար ընկերակցութեան և արհեստագործութեան մէջ, օգնել ընկերակցութեան անդամներին մատչելի փոխառութիւններով և վաճառահանել տեղական արդիւնքները ձեռնտու պայմաններով:

Ապագայ ընկերակցութեան նախաձեռնողները կազմել են կանոնադրութեան նախագիծը և ուղարկել են Թիֆլիս կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան, որպէս զի սա քննէ այդ նախագիծը, եթէ անհրաժեշտ լինի բարեփոխել և խնայամատոյց լինի հաստատել տարւո նրան: Մենք հաղորդել էին մեր ընթերցողներին, որ Աշտարակում և Վաղարշապատում կազմվել են փոխառութիւնները կանոնադրութեան և սպառող ընկերակցութիւններ: Այժմ դրանց վրա կաւերանայ և արդիւնագործական ընկերակցութիւն: Մենք բոլոր սրտից ողջունում ենք տեղական ինքնագործունէութեան այդ համակրելի փորձերը և ցանկանում ենք նրանց կատարելաբար աջակցել, հաւատարմութիւններին մեծ դեր է վերապահված մեր երկրի տնտեսական զարգացման գործում: Ամբողջ Եւրոպան ներկայումս շըը-

ջապատված է ընկերակցութիւնների խիտ ցանցով և նրանց միջոցով մեծապէս նրպատու է տնտեսական բարեփոխումներ մտցնելու իր կեանքի մէջ: Այն նոր ընկերակցութիւնը, որի նախագիծը մշակված է Իզդրում, տարբերվում է Աշտարակի և Վաղարշապատի ընկերակցութիւններից: Նրա նպատակը արդիւնագործութեան և վաճառահանութեան բարեփոխումն է: Եթէ տեղական գիւղացին և արհեստաւորը չունեն գործիքներ իրանց արհեստի համար, ընկերակցութիւնը պէտք է տայ այդ առարկաները, ձեռք բերելով կատարելագործված մեքենաներ և գործիքներ: Նա պէտք է հայթայթէ լաւ սերմացուներ և ծառատունիք, շերամի հանգեր, ազնիւ տեսակի անասուններ: Նա պէտք է նպաստէ զարգացնելու մեղրաբուծութիւն, կաթնատնտեսութիւն և գիւղատնտեսութեան ուրիշ ճիւղեր կատարելագործված եղանակներով:

Անկասկած, նոր գործի առաջին քայլերը դժուար կը լինեն և տեղի կունենան թերութիւններ ու սխալներ: Բայց այդ պատահարներից չը պէտք է վճարվել, այլ կրկնապատկել եւանդը և աշխատանքը: Լաւ հասկանալով, որ միայն տոկոս գործունէութեամբ կարելի է պատուաստել նոր ձեռնարկութիւնը և սկիզբ դնել մեր գաւառական կեանքում ընկերակցութիւնների տարածման, որոնց գործնական նշանակութիւնը շատ կարևոր է:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԳԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ուզում եմ մի քանի խօսք ասել երիտա-

արդ արտիստ պ. Գալֆայեանի մասին, որն այս օրերս բեմ դուրս եկաւ Եկատերինօզարում «Հաւնէտի» դերում տեղական թատերաւերների հետ միասին և որին առիթ ունեցայ առաջին անգամ տեսնելու:

Գրածս մանրակրկիտ քննադատութիւն չէ, այլ սուկ կանգնակաւի զգացումներ, թատերասերի տպագրութիւններ: Ես միանգամայն հետո եմ մասնագէտ թատերական կրիտիկոսի դեր ստանձնելու յաւակնութիւնից: Բայց առաջ մի երկու խօսք ընդհանրապէս պիտի ներկայացնեմ մասին: Աւելի քան ողորմելի էին այն պարագաները, որոնց մէջ տեղի ունեցաւ. անմահ Շէքսպիրի «Համլէտի» ներկայացումը Երևանի Երևակայիցք մի հին, փայտաշէն անշտրք թատրոն, մի սարայ, ուր ցրտից զողոզազող նասարակութիւնը վերարկուներով ու կրկնապատկերով էր նստած, բեմը կատարելապէս հաւարուն, բեմական սարք ու կարգը խղճալի, թատերասերները չարագանջ թողնելով, գրիմն ու հագուստները՝ ծիծաղ չարժող—և այդ բոլորը հակա Շէքսպիրի հսկայական գործերից մէկի չուրջ... Ձեր կարելի ամօթից չը կարժըրել և չը մեղադրել պ. Գալֆայեանին, որ նա համաձայնել էր «Համլէտը» բեմ հանելու այդպիսի անխելոք և ծաղրաշարժ պայմաններում: Պարտն Արմաւիրում նորնպէս ներկայացրել է «Համլէտը»: Անչափ զուարէ է, եթէ Գալֆայեան նիւթական կարիքից դրդված աւկամայից է անմահ Շէքսպիրին քաջբռնում այնպիսի տեղի, ուր ժողովրդի համար Շէքսպիրը նոյնն է, ինչ որ հոռոտ վարդը հարիւրաւորի համար... Սակայն անցնենք իրան Գալֆայեանին:

Գալֆայեանի մասին թեր ու դեմ շատ բան է գրվել մեր մամուլում: Կարծիքների աւելի աննպատ են եղել, քան թէ նպատուաբար Աննպատ էր նա զեռ Պարիզ էր. նպատուաբար երբ եկաւ Կովկաս և սկսեց անմիջապէս հասարակութիւնը ծանօթացնել իր արտիստական շնորհի հետ: Եղան նոյն իսկ այնպիսի քննադատներ, որոնք իրանց ներքողներում ու զըրուստներում ուղղակի յախրատակութեան հաստն. բայց դա միայն Կովկասի ոտու մամուլի էջերում էր... Իրանց ձայնը բարձրացրին յօդուս հայերի, ընդդէմ թիւրքական գազաութիւնների:

Եւ կարելի է յուսալ, որ այդ անվախ ձայնը զեռ շատ անգամ պիտի հնչէ սուլթանի բարեկամ Վիլհելմի պալատին: Բայց ինչն է ստիպում գերմանացի ուսուցիչ-վարակալներին այդ քայլն անելու. դրանց վերաբերմունքի մէջ էլ չը կայ, արդեօք, մի որ և է շահաբերական ձգտում, մի որ և է յետին նպատակ հայերի վերաբերմամբ: Ո՛չ, դրանց համակրանքի միակ շարժառիթը մարդասիրութիւնն ու արդարասիրութիւնն է անկեղծ արտայայտութեան վրա հիմնված: Իսկ անկեղծութիւնը շատ մեծ գրուական է այդպիսի ինչպէս:

IV

Մեզ մնում է մի քանի խօսք ասել գերմանացիների չորրորդ հոսանքի մասին, որ իր ծաւալով, իր գործունէութեամբ առաջին տեղին է բռնում: Դրա ամենաբարձր յատկանիշն այն է, որ իր ծրագրեր, իր գործունէութիւնը այս կամ այն ձևով կապել է կրօնական խնդրի հետ: Այդ ուղղութեան հետևող գերմանացիներից շատերի կարծիքով հայկական եկեղեցին մի հնացած, մաշված կազմակերպութիւն է, որ կարօտ է հիմնական վերանորոգութեան, իսկ այդ վերանորոգութիւնը կարող է կատարվել միայն բողոքականութեան միջոցով: Կենդանի խօսքով, շօտափելի գործով տարածել գերմանացիների ազդեցութիւնը հայերի մէջ. քայլ առ քայլ, աստիճան առ աստիճան զարմնել լուսաւորականների բողոքական և դրանով կանգնեցնել նրանց ընդհին և զարգացման ուղիղ ճանապարհի վրա—անա սա է այդ հոսանքի հիմնական նշանաբանը:

Ասել, որ Գալֆայեան մի խոշոր տաղանդ է, մի երկրորդ Արամեան—դա կը լինէր ծայրանկյութիւն, մի տեսակ «թթու ազգասիրութիւն»: Բայց որ նա օժտված է տաղանդով, արտիստական շնորհով, իմ կարծիքով, դա սակունք է և աներկայելի Գալֆայեան դեռ շատ ճանապարհ տաղանդի զարգացման, երկար տարածութիւն արտիստական կատարելագործութեան: Ի՞նչպէս կանցնէ նա այդ տարածութիւնը, ինչ ոյժ ու ծաւալ կը ստանայ նրա բնատուր ձիւղն ապագայում—անսխալ մարգարէանալ դժուար է: Մի բան միայն պարզ է: որ Գալֆայեանի տաղանդը դեռ տաղանդի գրութեան մէջ է. այս տաղանդը նման է դեռ չը մաքրված, չը զոված մտազդի, չը յղկված, չը կովկած թանկագին քարի: Եւ դրա ապացոյցը ես տեսայ «Համլէտի» հոգեբանական բարդ, դժուարին դերում: Գալֆայեանի «Համլէտը», իրաւ է ունէր շատ թերութիւններ, շատ տեղերում նա նոյն իսկ բոլորովին դժգոյն էր: Հօր ուրուականի երևալը, արեքի վրա երգիչները, դերասաններին հրահանգներ տալը, Օֆելիայի հետ ունեցած դիալոգը—այդ բոլոր տեսարաններում Գալֆայեանի խաղը հասնում էր ուղղակի միջակութեան, աւելին կատեմ, միջակութիւնից էլ պակաս: Սակայն կային տեսարաններ, որոնց նա միանգամայն անձանաչելի էր: «Էլինի թէ չը լինել» միանախօսութիւնը, բեմի վրա տեղի ունեցած ներկայացման տեսարանը, մօր հետ ունեցած խօսակցութիւնը նա պատկերացրեց այժե ընկնող ուժով, խաղաց պզտիկ, ցոյց տուեց տաղանդաւորութեան փայլուն մօմէնտներ:

Երբ տեսնում ես մի նոր արտիստ հրապարակ եկած որ և է կատարական դերում, մասնաւոր Շէքսպիրի պիեսներում, իսկայն սկսում ես մտազերել նոյն դերերում նախապէս տեսածը արտիստների և մտքումս տկայայից ստալ են գալիս համեմատութիւններ Տոլստոյի գրողը տեսել է եւրօպական հռչակ ստացած շատ տաղանդներ՝ Սալլիբի (հայր և որդի), Բօսսի, Բանայի, Մոնէ-Սիւլլի, Պօսսարտ, Միտերլուբցեր, վերջապէս ռազմիցս անգամ տեսել է մեր պարծանք Արամեանին, բայց ներ-

Եթէ այդ ուղղութեան հետևողների մէջ կայ կարծիքների մի որ և է տարբերութիւն—դա միայն գործունէութեան տակախկային, ընտրած միջոցներից ու ձևին է վերաբերում և ոչ միջոցիկին—հիմնական գաղափարին:

Ուշադրութեան արժանի է այն հանգամանքը, որ ամենից շատ գործ հայերիս համար կատարել է այդ կրօնական հոսանքը: Դրա ջանքերով են պահվում թիւրքաց Հայաստանում բազմաթիւ որբանոցներ ու մի երկու անկեղծանոցներ. դա էր, որ թէ կոտորածների ժամանակ և թէ կոտորածներից յետոյ դրամական օգնութիւն և մարդիկ ուղարկեց արեան աշխարհը, կոտորածների վայրերը: Ընչէ է, գերմանական որբանոցներում կրօնական նեղ ոգին չէ թագաւորողը, այլ ազատութիւնը: Ընչէ է, այդտեղ մուսք ունի և լուսաւորչական քանանամ՝ մայրենի գաւառանքի ծէսերը կատարելու համար: Սակայն հարցը դրանով չէ լուծվում, ներքին ձգտումը չէ ծածկվում:

Հեռանկատ գերմանացին շատ լաւ գիտէ, որ հայ որբերը մեծանալով գերմանական հսկողութեան ու լայն ազդեցութեան տակ, վայելելով գերմանական բարեգործութեան արդիւնքները, վերջի վերջոյ պիտի ինքնաբերաբար ընդունեն բողոքականութիւնը և նպատակն գերմանացիների հեռաւոր ձգտումների իրագործմանը: Ըզէտ հայ հոգեբանականութիւնը երբէք չէ կարող հակադիր ազդեցութիւն գործել, չէ կարող այդ երևոյթի առաջն անեղ... Մեր նկարագրած հոսանքի կենտրոնական մարմինը կարող է համարվել «Orient-Mission»-ը, որի ամենաանաղուս անդամներն են դոկտոր Լէպպիուս «Armenien und Europas» գրքի հեղինակը և դոկտոր Բօրբախ, որ մի քանի ան-

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՀԱՅԵՐԸ ԵՒ ԳԵՐՄԱՆԱՑԻՆԵՐԸ

III

Եթէ ուշի ուշով վերելու լինենք առհասարակ գերմանացիների վերաբերմունքը դէպի հայերը, եթէ քննադատորէն վերլուծենք նրանց գործունէութեան հիմունքներն ու նպատակները, այն ժամանակ կը գանք այն եզրակացութեան, որ եթէ Գերմանիայում կայ զուտ մարդասիրութիւնից ու արդարասիրութիւնից առաջացած համակրութիւն դէպի հայերը, եթէ կայ անկեղծ ցանկութիւն ուղղակի ճանապարհով, առանց յետին մտքերի թեթեւացնելու նրանց վիճակը—դա միայն ուսուցիչարականների կողմից է:

Ճիշտ է, դեռ տարիներ առաջ ուսուցիչարականների բանակից լավում էին նպատուաբար ձայներ հայերի օգտին, բայց կուսակցութիւնն իր ամբողջութեամբ միանգամայն անտարբեր էր:

Ճիշտ է, դեռ 1896 թ.ականին յայտնի էր. Բէրնլուստը «D. n. Zeit.» շարժաթղթերի էջերում հրաւեր կարդաց ակտիվ մասնակցութիւն ունենալու հայկական հարցում \*), սակայն նրա հրաւերը մնաց զայն բարբառոյ յանապատիճ, առանց արձագանք գտնելու կուսակցութեան կողմից: Սակայն վերջին երկու տարիներում դրութիւնը փոխված է: Մի կողմից անցեալ 1900 թ.

Պարիզում տեղի ունեցած համալսարանային կոնգրէսի որոշումները, միւս կողմից «PRO-ARM.» հրատարակութիւնը այնպիսի ակամաւոր մարդկանց ձեռքով, որպիսիք են Փօթեան, Պրեսանտ, Անատոլ Տրանս և այլն—ունեցան ուժեղ ազդեցութիւն Գերմանացի ուսուցիչարականները իրանց գործնական ծրագրի մէջ դրին նաև հայկական հարցը և նոյն իսկ այդ մասին հարցապնդում արին լայնատարած խմբագիր Գրոշմանէրի բերանով:

Թէև դրական ոչ մի հետևանք չունեցաւ այդ ձառը, թէև նա զուրկ էր ցանկալի բովանդակութիւնից և փաստական լուսաբանութիւնից, բայց այնուամենայնիւ նա միջխարական երեւոյթների շարքը պիտի դասվի, որովհետև նա միջին, որովհետև դա առաջին բողոքական էր, որ ազատ հնչում էր եսպայայ Գերմանիայի պետական շրջանում:

Բայց միմիայն դրանով չը սահմանափակվեց ուսուցիչարականների համակրանքը դէպի հայերը:

Դրանից յետոյ նրանց աջակցութեամբ Բերլինում անցեալ տարի տեղի ունեցաւ մի հրակայական կոնֆերանս, որտեղ աշխարհահռչակ տնտեսագէտ Է. Բերնշտայն հնչեցրեց իր ազդեցիկ ձառը \*) «Die Leiden des Armenischen Volkes und die Pflichten Europas»—(Հայ ժողովրդի տառապանքները և Եւրօպայի պարտականութիւնները)—խորագրով: Վերջապէս ուսուցիչարականներն էին, որ տասնեակներով արձագանք տուին Բերլինում կայացած «Հայաստանի համաժողովի» կոչին և

\*) Այդ ձառը արդէն լրջ է տեսել առանձին գրքերով—գերմաներէն և ֆրանսերէն—Եւրօպայի հայ հոսանքի հիմնական հրատարակութեամբ:

\*) «Die deutsche Soz.—demokr. und die türkische Wirren».

կայ դէպքում եւ ընտել զգում ոչ մի ան-  
խուսափելի պահանջ այդ տեսակ համեմատու-  
թիւններին եւ ծիծաղելի կը լինէր, եթէ զգային  
Համեմատութիւններ կարող են լինել փոքր ի  
շատէ հաւասարաչափ ոյժերի, հաւասարաչափ  
տաղանդներին մէջ:

Գալֆայեանն աշակերտ է դեռ և կարօտ տա-  
կաւին աշակերտելու: Նրա խաղի մէջ առ  
այժմ նկատուում են սոսկ տաղանդի նշաններ,  
զգալի կերպով բացակայում են բնական ա-  
րուեստը, չկազմ, չափի զգացումները, փոքրա-  
նութիւնը, որոնք ձեռք են բերվում միայն աշ-  
խատութեամբ, լուրջ և յարատեւ աշխատու-  
թեամբ: Իրոք չէ ասած, որ աշխատութիւնը  
կէս-տաղանդ է և Բացի այդ բոլորից, պ. Գալ-  
ֆայեան քանի որ փափագ ունի ծառայելու  
բացառապէս իր մայրենի լեզուին, նա ասանձին  
ուշք ու խնամք պէտք է տանէ նաև մայրենի  
լեզուի ներքնութիւններին, կոնկրետ և բարե-  
նչիւնութեան վրա: Նրա առողջութիւնը,  
նրա բնական լեզուն մաքուրութեան, ճկունու-  
թեան ու պարզութեան կողմից զգալի կերպով  
կարգում են: Թող առհասարակ մեր հայ գե-  
րասանները կենդանի օրինակ ունենան անու-  
նաց Արապելի երաժշտական հայերէնը, որի  
մէջ անքան ոյժ, թովանք ու փայլ կար:

Գեղեցիկ և գրաւիչ է Գալֆայեանի բնա-  
կան արտաքինը, հարուստ է միմիկան, ան-  
հետու է նա միայն չնչառութեան և ձայնի ե-  
լնչններին իչխելու արուեստում և այդ պա-  
կան աչքի է ընկնում ու նոյն իսկ թուրաց-  
նում է խաղի տպաւորութիւնը մանաւանդ  
պաթետիկ տեղերում:

Ներքինում եւ իմ տպաւորութիւններս:  
Պ. Գալֆայեանը, իմ կարծիքով, առ այժմ  
հայկական բնաբն համար դեռ յոյսերի և ակնու-  
կարութիւնների չըջանում է: Նա կարող է  
ապագայում պատուաւոր տեղ բռնել մայրենի  
բնաբն վրա, կարող է այդ բնաբն աչքի ընկնող  
և սիրելի ոյժերից մէկը լինել, եթէ միայն  
ըզմտութեամբ վերաբերվի իր բնատուր ըն-  
դունակութիւններին և չը վարակվի յարակու-  
տութեան արտաբեր... Աշխատութեամբ, միայն  
մրջիւնային լուռ ու համեստ աշխատութեամբ  
նա կարող է քաջ կերպով արդարացնել եւ յոյ-  
սեր, եւ ակնկարութիւններս...

Այ. Մատուրեան  
Եկատերինօպար.

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻԾ

Փետրվարի 23-ին  
Երէկ, փետրվարի 22-ին, Երևանի ընտիր  
հասարակութեան ներկայութեամբ տեղի ու-  
նեցաւ մի գրական-երաժշտական երեկոյթ, նը-  
ւերված մեր անվան հրապարակախօս Գր. Արծ-  
րունու մահվան տասնամեակին: Երկուստ երգե-  
ցիկ 40 հոգուց բաղկացած խումբը, երիտա-  
սարդ Մանասեանի առաջնորդութեամբ և տ.  
Վ. Աթանասեանի երաժշտական դաշնակցու-

գամ ճանապարհորդել է հայաբնակ գաւառներ-  
րում, գրել է մի քանի աշխատութիւններ դը-  
րոնաց մասին և առհասարակ հեղինակաւոր  
անձնաւորութիւն է համարվում թիւրքական  
արեւելքին և մասնաւորապէս հայերին վերաբե-  
րեալ խնդիրներում:

Ինչ աչքով են նայում զրանք հայերի վրա,  
ինչ են ասում առհասարակ թիւրքերից և  
մասնաւորապէս հայերի մասին Տեաններ:

Անցեալ տարի Քերթնում տեղի ունեցաւ ա-  
ռաջին հայկական երեկոյթը, ուր հրաւիրված  
էին խօսելու ի միջի այլոց և զօկտօր Լեւաթուու  
ու Րօբբախ:

Լեւաթուու իր ճառով թեթևակի կերպով յի-  
չեցրեց թիւրքերի հիւանդոտ դրութեան և  
գերմանական ընդարձակ ձեռնարկութիւնների  
մասին և ապա կանգ առնելով հայերի ազգա-  
յին յատկութիւնների, կատարելիք կուլտուրա-  
կան դերի վրա, ասաց ի միջի այլոց.

«Հայերը աշխատասէր, ճարպիկ և ընդունակ  
ազգ են: Նրանք շատ մեծ դեր կարող են կա-  
տարել արեւելքում քաղաքակրթութիւն տարա-  
ծելու ինչըրում, շատ մեծ օգնութիւն կարող  
են ցոյց տալ գերմանական ձեռնարկութիւննե-  
րի մէջ: Սակայն անհրաժեշտ է օր ատալ զարկ  
տալ նրանց ներքին զարգացմանը. հարկաւոր  
է թարմացնել նրանց կրօնական դաստիարակ-  
ութեան և ստուածաբանութեան ազդե-  
ցութիւնը և բողոքականութեան փրկարար ոյ-  
ժը կարող են կատարել այդ վերանորոգող ու  
թարմացնող դերը...»:

Դրանից կարելի է այն եզրակացութիւնը  
զուրք բերել, թէ գերմանացիները մի բարե-  
բար գործ կատարած կը լինեն, եթէ օր ատալ  
բոլոր հայերին բողոքական դարձնեն:

Թեամբ, մեծ աջորդութեամբ երգեց աւելի քան  
14 երգեր, որոնց մէջ մանաւանդ գեղեցիկ էին  
«Լօ-յօ-նա» և Կարա-Մուրզայի «Որ վառեցիքը»:  
Պ. Ա. Աթանասեան խօսեց Արծրունի որպէս  
հրապարակախօս և հասարակական գործիչ:  
Ինչի մասին, ապա կարգադրեցին Մատու-  
րեանի մի քանի ոտանաւորներ: Երեկոյթը  
վերջացաւ պարերով, որոնք տեսցին մինչև գի-  
չերվայ ժամի 2-ը: Հասարակութիւնը ցրվեց  
գոն և ուրախ տրամադրութեան տակ:

Որքան տեղեկացանք, «Մշակում» Երևանից  
տպված լուրը փետրվարի 8-ին կազմած երե-  
կոյթի մասին չիմոռ է եղել: Լրատուն կամ  
աչքի առաջ է ունեցել այս երեկոյթը, որ  
պէտք է կայանար փետրվարի սկզբներին կամ  
չարամտութեամբ ցանկացել է ծաղրել...

Ա. Աթանասեան

ՆԱՄԱԿ ԽՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Երևան, փետրվարի 15-ին

«Մշակի» № 33-ը ձեռք առնելով, զարմաց-  
մամբ կարգացի Երևանից հարողում այն լուրը,  
որ իբր փետրվարի 9-ին տեղի ունեցաւ մի  
գրական երեկոյթ, Գրիգոր Արծրունու մահվան  
տասնամեակի առթիւ, որտեղ եւ և Լ. Մար-  
կոսեանը ճառեր խօսեցին: Չարմացայ, որով-  
հետեւ այդպիսի երեկոյթ տեղի չէ ունեցել,  
բայց չը զարմացայ, երբ վարկենապէս աչքին  
պատկերացաւ այն հոտած, ապականված ճա-  
հիճը, որտեղ վրտում են մի շարք օտարաբար  
արարածներ, զգլիւն ճիճուներ, որոնք ընդու-  
նակ են միմիայն զաղիր արարքներ գործե-  
լու: Ով չէ յիշող մի տարի ու կէս առաջ Դա-  
րաչիլագից հարողած նման չիմոռ լուրը  
Գրիգոր Արծրունի մասին Այսպիսի ստոր խա-  
ղեր, այն էլ պատկանելի մարդկանց յիշատա-  
կին, ընդունակ է Երևանի հոտած, ապական-  
ված ճահիճը:

Ինչ են ուզում ասել այդ ստախոսները—  
Երևի այն, որ մենք մեծ հրապարակախօսի հա-  
մակրողներս՝ զուր գանձ և ասելք, որ Երևա-  
նում Արծրունու յիշատակին որ և է հոգեհան-  
գիտ կամ երեկոյթ չեղաւ Այո, ոչ հոգեհան-  
գիտ և ոչ էլ երեկոյթ տեղի չունեցաւ: Երևա-  
նում Արծրունու տասնամեակի յիշատակին  
Չեղաւ, որովհետեւ երեկոյթներ կազմելու հնա-  
րաւորութիւն չը կայ, իսկ դիմել Ստեփան  
արեւիկոսյանին, որը մի քանի ամիս առաջ  
մի խումբ երիտասարդների ցանկութեամբ, այն  
էլ էլ միտածնի միտքան և սիրտի անդամ Բազ-  
րեւ Յաւաքայեանի համար հոգեհանգիտ կա-  
տարող քահանային մի անագին խնդրի տակ  
ձգեց, դիմել նրան, որ թող այս մի հոգեհան-  
գիտ կատարել, ոչ ոք համակարծիք չէր: Յա-  
րաբերութիւնը առաջնորդարանի հետ վաղուց  
դառնած էր համարում այն չըջանք, որի  
արտին մօտ էր Արծրունու յիշատակը:

Բայց որ մեծ հրապարակախօսի յիշատակը  
շատ թարմ է և մեծ Երևանի հասարակութեան  
մէջ, որ նա Արծրունի ունի Երևանում իր հա-  
մակրող, իր սկզբնաւորները և մարդասէր գա-  
ղափարները դաւանող երիտասարդական չըջան,  
ապագայը դրա այն պարտութիւնը, որ վերջին  
տարիներում կրեց աղայականութիւնը, այն  
լախիարումը, որ տարաւ հնամուտ օրիորդիսին:

Կրօնական այդ խնդրում Լեւաթուուից ազա-  
ամիտ է Րօբբախ: Նա աւելի մօտ լինելով  
հայկական իրականութեանը, աւելի լաւ ճա-  
նաչելով հայերին, զգուշացնում է գերմանա-  
ցիներին, որ այդպէս ազատ-համարձակ չը  
մտածան հայկական եկեղեցուն և աւելի չեղծ  
ձեռով, աւելի նպատակայարմար ճանապարհով  
կատարեն իրանց միտքան:

Այդ մասին նա գրեաւ 1898 թ. «Christliche  
Welt» կրօնական թերթում տպագրեց մի յօդ-  
ւած՝ «Was müssen wir bei der Arbeit für  
die Armenier berücksichtigen»—(«Ինչ պէտք  
է ուշադրութեան առնելք հայերի համար աշ-  
խատելիս»)—վերապարտ:

Այդ յօդուածը յետոյ լոյս տեսաւ առանձին  
գրքակցով: Դրա մէջ Րօբբախ չիշտում է այն  
կէտը, թէ «հայկական եկեղեցին թէև գտնու-  
վում է օղորտելի դրութեան մէջ... թէև կա-  
րօտ է հիմնական բարեփոխութեան, բայց չա-  
փազանց մեծ զգուշութեամբ պէտք է կատա-  
րել այդ բարեփոխութիւնը, որովհետեւ նա ազ-  
գային եկեղեցի է, որովհետեւ ձուլվում է հայի  
անցելի ու ներկայի հետ...» (եր. 2-4):

Նրա կարծիքով աւելի ուղիղ ճանապարհի  
վրա են կանգնած անբերկական միտքներնե-  
րը, քանի որ նրանք չեն դիպում հայոց եկե-  
ղեցու անըղջութեանը, այլ աշխատում են  
կարելոյն չափ շատ անհամարձակ փրկել և, եթէ  
կարելի է, անըղջ ազգը բողոքական դարձ-  
նել... (եր. 5):

Դրանից յետոյ Րօբբախ յիշում է, թէ որքան  
տոյժ ու խակ է հայ հոգեհանգիտութիւնը,  
թէ ինչպիսի ձգտումներ ու համոզմունքներ  
ունեն հայերի պահպանողականները և ազգա-  
տամիականը—մշակականները կոչվող կուսակ-

և այն խայտառակութիւնը, որով զրոյմից հա-  
կաժողովրդական ստոր ճիւղն ու ջանքը:

Ե. Տէր-Մարտիրոսեան

Խմբագրութեան կողմից Դժբախտա-  
բար, մեզ միշտ չէ աջողում, չը նայած մեր  
գործ դրած զգուշութիւններին, հետեւ մնալ  
այնպիսի մարդկանցից, որոնք մի հաճող են  
զգուշ խմբագրութիւնները մտրեցնելու մէջ:  
Մենք զգուշութիւն գործադրում ենք մանա-  
ւանդ Երևանի վերաբերմամբ, ուր թեմական  
զարդուած գոյութիւն ունեն այնպիսի ան-  
հասներ, որոնք ոչ թէ մի զարդուած, այլ փոքր  
իշտակ օրինաւոր հասարակութեան մէջ անգամ  
տեղ չը պիտի ունենան: Մեր խմբագրութիւնը  
այս մասին փաստեր շատ ունի: Ե. Տէր-Մար-  
տիրոսեանի յիշած լուրը մեզ հարողել է ուն  
Հ. Սաֆարեան քաց նամակով: Հաւանական է,  
որ ստոր ֆայլիֆիկացիաների հերոսները կեղ-  
ծած լինեն և այս անուամբ Մենք յոյս ունենք,  
որ կը կարողանանք մի օր յայտնել, թէ ով է  
մեզ այդ լուրը հարողել:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կառավարական չըջաններում հարց է բարձ-  
րացրած թող տալու արտասահմանեան լեռ-  
նային ինստիտուտներում աւարտած երիտա-  
սարդներին քննութիւն բռնել Պետեցորդի  
լեռնային ինստիտուտում լեռնային ինժեների  
կոչումն ստանալու համար:

«КАВКАЗЪ» լրագրում տպագրված է Թիֆլի-  
սի նահանգապետի հետեւեալ որոյումը. «1893  
թ. փետրվարի 25-ին եւ, Թիֆլիսի նահանգա-  
պետի պաշտօնակատար, քննելով այս փետր-  
վարի 23-ին Թիֆլիսի Միջին փողոցում տեղի  
ունեցած անկարգութիւնների գործը համա-  
ձայն Թիֆլիսի քաղաքի համար այն պարտադիր  
կանօնների, որոնք հասարակված են Կովկա-  
սեան քաղաքագիական մասի պարոն կառա-  
վարչապետի կարգադրութեամբ 1902 թ. ապրիլի  
յուշվարի 18-ին՝ պետական կարգը և հասա-  
րակական խաղաղութիւնը պահպանելու նպա-  
տակով սահմանված կանօնների 15-րդ յօդուա-  
ծի հիման վրա—որոնցից՝ հասարակական կար-  
գին հակառակ գործողութիւններ կատարելու  
նպատակով փողոցում ժողով կազմելու և ուս-  
տիկանութեան օրինական պահանջները չը կա-  
տարելու համար բանտարկութեան ենթարկել:  
a) երեք ամսով. b) Սղախի գաւառի Բօզքէ  
գիւղի բնակիչ Դաւիթ Չուտալալիին, 2) Թիֆ-  
լիսի քաղաքի բնակիչ Պաւլ Բէրիձէին, 3) Գու-  
թայիսի գաւառի Խօնի գիւղի բնակիչ Ալէք-  
սանդր Սանձէին, 4) Կօլքոյի նահանգի գիւ-  
ղացի Իվան Բուզրիսին, 5) Եօրպայանի գաւա-  
ռի Լէւոն-Ստուրի գիւղի բնակիչ Սիմէօն Գե-  
րալիին, 6) Բաճայի գաւառի Գլըրդիս գիւ-  
ղի բնակիչ Վարդէն Գլըրդիսին, 7) Գութայի-  
սի գաւառի Դիդի-Ջիլիսայի գիւղի բնակիչ  
Վաղդիմիր Բախտաձէին և 8) Բօքչալուի գա-  
ւառի Եւլաւէր գիւղի բնակիչ Մարտիրոս  
Միրաքոյին. b) վեց շաբաթով. 9) Օզուր-

ցութիւնները, թէ որքան ողորմելի դրութեան  
մէջ է զարդացական գործը հայերի մէջ և այդ  
բոլորից յետոյ առաջարկում է ամենազլխաւոր  
ուշադրութիւնը դարձնել հայ հոգեհանգիտու-  
թեան կայմը բարեփոխելու,—գերմանական  
աստուածաբանութիւնը իւրացրած հոգեհա-  
կանների թիւն աւելացնելով, և ընդհանուր  
ժողովրդական կրթութիւնը բարձրացնելու և  
բարելաւելու վրա:

Առ այժմ ամեն կերպ նպաստել կրթված հո-  
գեհանգիտ գործիչների քանակն աւելացնելուն,  
իսկ դրանից յետոյ գերմանական աստուածա-  
բանութիւնը, գերմանական ազդեցութիւնը  
ինքն ըստ ինքեան կը կատարեն իրանց բարե-  
նորոգիչ դերը և կը հասցնեն ցանկալի նպա-  
տակներ:

Այդպէս ուրեմն նա էլ հայերի փրկութիւնը  
Գերմանիայից, գերմանական բողոքականու-  
թիւնից է սպասում, միայն նրա առաջարկած  
ծրագիրը աւելի զգուշ, աւելի փափկանկատ ու  
լայն է:

Բաւական ուշագրաւ է այդ մի և նոյն հե-  
ղինակի կարծիքը առհասարակ թիւրքերի ա-  
պագայի մասին:  
—Գերմանացիներն համար, ասում է նա  
«Die Bagdadbahn» վերնագրով աշխատութեան  
մէջ (եր. 16)—բողոքովն ձեռնառու չէ, որ  
թիւրքեան մնայ Երևանը մարդու դրութեան  
մէջ, որ նա խաղաղի լինի մեծ պետութիւն-  
ների ձեռքում: Բողոքողի երկաթուղին չիւնե-  
լու համար մենք պիտի ծախենք ամենաբարձր  
480,000,000 մարկ, երկաթուղու չըջակալ գա-  
ւառներում նոր կուլտուրա, անտեսական նոր  
բարեփոխումներ մտցնելու համար պիտի տանք  
նորից հարկերու միջոցներ, իսկ այդպիսի

գէթի գաւառի Ջէմոխտի գիւղի բնակիչ  
Բաժդէն Թէլազէին, 10) Թիֆլիս քաղա-  
քի բնակիչ Գէորգ Օսրիպովին, 11) Կուշէթի  
գաւառի Չախուր-Կարի գիւղի բնակիչ Էֆիմ  
Չուկուրիին, 12) Թիֆլիսի գաւառի Նինօձին,  
13) Թիֆլիսի գաւառի Խաչի գիւղի բնակիչ Գէօր-  
գի Թէվդորալիին, 14) Գութայիսի գաւառի  
Սաղիվախօ գիւղի բնակիչ Լէօնտի Բօրիձէին և  
15) Թիֆլիս քաղաքի բնակիչ Կօնստանտին  
Շաքիւովին: Երեք շաբաթով. 16) Գութայիսի  
գաւառի Էջեղի գիւղի բնակիչ Մինա Կալա-  
ձէին, 17) Թիֆլիսի քաղաքի բնակիչ Պետր  
Ջինվալաձէին, 18) Թիֆլիս քաղաքի բնակիչ  
Վասիլ Աթաբէգովին, 19) Թիֆլիսի գաւառի  
Չալդի գիւղի բնակիչ Նետտօր Չաբալիին,  
20) Բաղայի գաւառի Ամբոլաուրի գիւղի  
բնակիչ Վասիլ Խուրիելիին Մի ամսով. 21)  
Գութայիսի նահանգի ազնուականուհի Օլգա  
Գարուհիային. Մի շաբաթով. 22) Գութայիսի  
նահանգի ազնուականուհի Նինա Ալալէրիս-  
նիին, 23) Գօրու գաւառի Գօմի գիւղի բնա-  
կուհի Մարիա Գօգիտալիին: Այդ որոշման  
գործադրութեան սկիզբը համարել փետրվար  
ամսի 23-ի ցերեկվայ 12 ժամից:

Մեզ հարողում են, որ Թիֆլիսի նահան-  
գում ներկայումս վերջացել է անասունների  
օտանտխաղ և մնացել են միայն չորս կէտ,  
որտեղ կայ այդ կրօնադրութիւնը, այն է Բօր-  
չալուի գաւառի երկու կէտերում Այստեղ ու-  
ղարկված է հակաժանտախտային չիբուկ անա-  
սուններին պատուաստելու և նախապահպանե-  
լու վտանգից:

Մեզ հարողում են, որ Թիֆլիսում գոյու-  
թիւն ունեցող պետական ձեռքբերական գե-  
պօն, որ մինչև այժմ գտնվում էր Հաւաքարի  
քաղաքամասում, շուտով կը տեղափոխվի Դի-  
դուքէ ձիւրաւի չըջան մէջ:

Կովկասեան լեռնային վարչութեան պաշտօ-  
նական տեղեկութիւններին նայելով 1902  
թ. ապրիլի ընթացքում Կովկասում ստացված է  
ընդամենը՝ նաւթ—705,912,959 պուդ, քարա-  
ծուխ—2,974,308 պուդ, պղնձահանք—6,641,292  
պուդ, ալմ—3,083,082 պուդ, մարգանտեք—  
24,943,315 պուդ, ծծումբ—160,000 պուդ և  
ձուլված է պղինձ—213,274 պուդ:

ՔԱՆԱԳԻՆԻԾ մեզ գրում են. «Մեր գիւղ-  
ունի երկու քահանայ, որոնցից մէկին Երևանի  
կօստաօրիայի կարգադրութեամբ իբր թէ  
ժամանակաւորապէս տեղափոխել են Երևանի  
եկեղեցիներից մէկը: Սրա ծուխերը յանձնել  
են միւս քահանային հովելու, որպէս զի ե-  
կամուտի մի մասը յանձնէ ընկերուը: Բայց  
երբեմն-երբեմն մէկ էլ տեսնես լոյս է ընկնում  
գիւղում Երևան տեղափոխված քահանան կա-  
տարելու համար իր հօտի պահանջները, այն

խոյր գումարներ դնել մի այնպիսի երկրի  
ժողով, որը իր թնոյ կազմուածքով խաղաղիք  
է օտարների ձեռքում—դա աւելի քան անը-  
տուութիւն է: Ուրեմն Գերմանիայի լիքերի տե-  
սակցիցից Թիւրքեան ուժեղ պիտի լինի. թնոյ  
Թիւրքիայի համար ոչ մի պիտի չի, իսկ ուժեղ  
Թիւրքիայի համար—որքան որ ուզենայ...»

Այդպէս, ուրեմն, գերմանացիների կրօնական  
հոտանքի տեսչանքն է օգնել հայերին, բողոքա-  
կանութեան ազդեցութիւնը տարածելով նրանց  
վրա, ոչինչ չանել թիւրք կառավարութեանը  
հակառակ ու վնասակար, որպէս զի նա կաս-  
կածանքով,—թշամանքով չը վերաբերվի դէպի  
գերմանացիները:

Ամիտփելով մեր բոլոր ասածները գերմանա-  
ցիների մասին, գալիս ենք այն եզրակացու-  
թեան, որ նրանց կողմից բաւական խոյր հե-  
տաքրքրութիւն կայ դէպի հայերը և առհասա-  
րակ դէպի Թիւրքիայի ներկայ դրութիւնը:

Իսկ այդ հետաքրքրութեան հիմքը կազմում  
է մասամբ արդարաբնութիւնը և գլխաւորապէս  
ժամանակակից ու եռակայնի տեղ հայիւնները—  
հետաւոր կամ մօտաւոր:

Ի հարկէ, գերմանացիները կարող են հայե-  
րիս վերաբերմամբ իրանց հայիւններն ունենալ  
բայց մենք—հայերն էլ իրաւունք ունենք քն-  
նել նրանց փրկարկութիւնը դէպի նրանց գոր-  
ծունէութիւնը, դէպի նրանց ամեն մի քայլը  
ու ձեռնարկութիւնը:



